

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՐԿԱՆԴԱՍ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՌԻՍՈՒՑԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Հաղորդակցվելու ժամանակ մարդն օգտագործում է տարբեր լեզվական միջոցներ՝ պարզ և բարդ քերականական կառույցներ, որոնց առկայությունը վկայում է այն մասին, որ բարդ քերականական կառույցը կարելի է պարզեցնել և ընդհակառակը։ Նման հնարավորություն տալիս են մեզ դերբայները և դերբայական կառույցները։ Այսպես օրինակ՝ *We heard that they were whispering something* -ը բարդ նախադասություն է խնդիր երկրորդական նախադասությամբ, որը կարելի է պարզեցնել, օգտագործելով դերբայական քերականական կառույց։ Օր. *We heard them whispering something.*, որտեղ *them whispering*-ը բարդ քերականական դերբայական կառույց է, ավելի ճիշտ երկանդամ կառույց է, որը հանդես է գալիս որպես նախադասության մեկ անդամ։

Երկանդամ քերականական կառույցները բազմազան են լեզվում, կախված երկանդամ կառույցի երկրորդ բաղադրիչից, որն արտահայտվում է անգլերենի երեք դերբայներից որևէ մեկով *Infinitive*, *Gerund* և *Participle* -ով։

Ինչպես նշվեց վերը, դերբայական երկանդամ կառույցները բաղկացած են երկու բաղադրիչից, անվանական և բայական, որոնք ներկայացնում են նախադասության մեկ անդամ և այդ բաղադրիչները սերտորեն միանում են այն կապով, որը գոյություն ունի ենթակայի և ստորոգյալի միջև, և այդ է պատճառով, որ պարզ նախադասությունը բարդացնելիս երկանդամ կառույցի անվանական բաղադրիչը դառնում է երկրորդական նախադասության ենթական, իսկ բայական բաղադրիչը ստորոգյալը։ Օրինակ՝

We heard them whispering something-ը դառնում է



We heard (that) they were whispering something., որտեղ *them* անվանական բաղադրիչը օգտագործվում է իր ուղիղ ձևով՝ անձնական դերանվան համապատասխան ուղղական հոլովածով, քանի որ անձնական դերանվան միայն ուղղական հոլովածը կարող է հանդես գալ ենթակայի պաշտոնում, իսկ *whispering* դերբայը դառնում է նախադասության ստորոգյալը, որը նշանակում է, որ նա դերբայից կամ բայի անդամ ձևից դառնում է խոնարհված բայ՝ *was whispering* և իր մեջ ամփոփում է խոնարհված բային բնութագրող յոթ քերականական կարգերը՝ * դեմքի, թվի, ժամանակի, կերպի, սեռի, եղանակի և ժամանակային հարաբերակցության քերականական կարգերը։

“Նախընտրելի է դերբայները նշել իրենց անգլերեն անուններով, քանի որ նրանցից մեկը Gerund-ը, չունի իր թարգմանությունը.

***Ի տարբերություն խոնարհված բայի, դերբայն ունի երեք կամ երկու քերականական կարգ, կախված դերբայի տիպից՝ ժամանակային հարաբերակցություն, սեռ, կերպ, վերջինս բացակայում է Participle -ի և Gerund-ի մոտ:

Նման պարզ բացատրության բացակայությունը թույլ չի տալիս ուսանողին հասկանալ գրքի բացատրությունը կամ պատկերացնել այն պարզ գործընթացը, որը մենք ցույց տվեցինք կոնկրետ օրինակի վրա:

Քերականական կառույցներից ոմանք ավելի հաճախակի են օգտագործվում, մյուսները՝ ոչ: Պատճառը գուցե այն է, որ որոշ կառույցների հետ ուսանողները ծանոթանում և սկսում են օգտագործել դեռևս դպրոցից, մասամբ հասկանալով, մասամբ՝ մեխանիկորեն, ընդօրինակելով մոդելը, իսկ մյուսները թերևս դուրս են մնում ուսանողի տեսադաշտից այն պարզ պատճառով, որ ներկայացվում են մասնագիտական բուհի երկրորդ կուրսում, սակայն ասպեկտային ուսուցումը թույլ չի տալիս մինչև վերջ հետևողական լինել, որ ուսանողը նորությամբ էլ նույն հաճախականությամբ օգտագործի, ինչ որ նախկինում արդեն սովորածը:

Կա նաև մի երկրորդ դժվարություն. այդ բոլոր կառույցներն առաջին հայացքից շատ նման են թվում, քանի որ բոլորն էլ բարդ քերականական կառույցներ են և նույն խորությամբ չեն լուսաբանված կամ ուսանողը չի գտնում մայրենի լեզվի համարժեքը, ուստի նա խուսափում է օգտագործել նորությամբ: Նոր քերականական երևույթը, կամ շփոթում է նոր քերականական կառույցը նախադասության հետ, կամ ճիշտ բաղադրիչները չի օգտագործում: Օրինակ, այդպիսին է Subjective Predicative քերականական կառույցը (տես գրականության ցանկը):

Հաջորդ դժվարությունը այն է, որ երկանդամ կառույցների առաջին բաղադրիչը՝ անվանական բաղադրիչը, կարող է արտահայտվել տարբեր անվանական խոսքի մասերով, մինչդեռ չգիտես ինչու քերականական դասագրքերում նշվում են գոյականն ու դերանունը, բայց չի կոնկրետացվում, թե որ դերանունը: Չէ՞ որ դերանունները տարբեր են և նրանցից միայն ոմանք կարող են հանդես գալ որպես երկրորդ բաղադրիչ, իսկ մյուսները՝ ոչ: Հնարավոր է, որ գոյականը, կամ դերանուններից ոմանք ավելի հաճախ են հանդիպում որպես անվանական բաղադրիչ, բայց ուսանողն ինչ գիտի, և բացի այդ, նոր քերականական երևույթը բացատրելիս անհրաժեշտ է երևույթը բացատրել իր բոլոր մանրամասնություններով, քանի որ դա օտար լեզվի երևույթ է և հնարավոր է, որ իր համարժեքը չունենա մայրենի լեզվում, կամ էլ հնարավոր է, որ երևույթն ունենա իր համարժեքը ուսանողի մայրենի լեզվում, բայց նույն բաղադրիչները չունենա, որը և դժվարացնում է ուսուցման գործընթացը: Բացի

այդ, խոսքի վերլուծությունը ցույց է տվել, որ ուսանողը խոսքի կառուցման համար իրագործում է հետևյալ գործողությունները.

1. Ընտրում է անհրաժեշտ բայի ուղիղ ձևը,
2. Ընտրում է անհրաժեշտ լեզվական ածանցներն ու վերջավորությունները,
3. Միացնում է ստեղծում է անհրաժեշտ միավորները,
4. Հաջորդաբար տեղավորում է այդ միավորները նույն գծի վրա,
5. Ստեղծում է խոսքը:

Այսպես օրինակ, անգլերենում ունենք Subjective Predicative կառույցը, որը ստացվում է բարդ նախադասությունը պարզեցնելու հետևանքով:

It seems that we know everything. Թվում է, որ մենք ամեն ինչ գիտենք:

Բարդ նախադասություն ունենք թե՛ հայերենում, թե՛ անգլերենում:

We seem to know everything-ը պարզ նախադասություն է երկանդամ կառույցով, որին հայերենում համապատասխանում են է 1. Թվում է, որ մենք գիտենք ամեն ինչ : 2. Մենք, թվում է, գիտենք ամեն ինչ:

Երկու թարգմանություններն էլ հնարավոր են, բայց չգիտես ինչու նախընտրելի է առաջինը, որը և սխալ կառույցի օգտագործման պատճառ է դառնում:

Որքան շատ տեղեկություն ստանա ուսանողը նույն կառույցի մասին, այնքան ավելի հեշտ կլինի նրա համար օգտագործել նոր երևույթը և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքում: Բացի այդ, գաղտնիք չէ, որ մայրենի լեզվի շատ երևույթներ, որ ուսանողը օգտագործում է մեխանիկորեն, սկսում է գիտակցել միայն այն ժամանակ, երբ անցնում է օտար լեզվի այս կամ այն երևույթը:

Այսպես, անգլերենի երեք դերբայներն էլ կազմում են քերականական կառույցներ, սակայն Infinitive -ն ու Participle-ը ավելի շատ քերականական կառույցներ են կազմում, քան Gerund-ը: Infinitive-ը կազմում է երեք բարդ կառույց Objective Subjective, For to + Infinitive կառույցները, Participle-ը Objective, Subjective, Nominative Absolute կառույցները, իսկ Gerund-ը Objective Predicative կառույցը:

Ինչպես արդեն վերը նշվեց, կառույցի անվանական մասը կարող է արտահայտվել

I.1. Գոյականով ընդհանուր հոլովում,* ա. հասարակ, բ. հատուկ (տես Objective

Predicative կառույցները Infinitive -ի և Participle-ի հետ):

Օրինակ՝ ա. Sister, friend, բ. John, Ann.

I 2. Գոյականով ստացական հոլովում ա. հասարակ, բ. հատուկ:

ա. Sister's, friend's բ. John's, Ann's.

II. Դերանունով.

1. Անձնական ա. ուղղական հոլովում՝ I, you, he, she, it, we, they (Subjective Predicative կառույցը Infinitive-ի և Participle-ի հետ և Nominative Absolute կառույցը Participle-ի հետ): ք. խնդրառական հոլովով՝ me, you, him, her, it, us, them(տես Objective Predicative կառույցները Infinitive –ի և Participle-ի հետ):

2. Ցուցական՝ this, that, these, those, the same.

3. Հարաբերական՝ who, what, which, when, where, how, how long.

4. Անորոշ somebody, anybody, everybody, something, anything, everything, both, other (others) one , either of them.

5. Ժխտական՝ nobody, none, nothing, neither of them.

6. Անդրադարձ՝ myself, yourself, himself, herself, itself, ourselves, themselves.

III. Թվականով՝** ա. քանակական, բ. դասական.

Թվականը և ածականը օգտագործվում են գոյականաբար:

ա. Two, three բ. the second, the third.

IV ա. Գոյականացված ածականով՝ the rich, the poor, the wounded, the blind.

բ. ածականի համեմատական ու գերադրական աստիճանով՝ the latter, the tallest.

Օրինակ՝

I saw my sister.

Jane

them,

myself

this,

somebody,

something go/going.

both of them,

the first

the two,

the latter

the wounded,

People

We

Others

The two

Somebody seem(s) to know the truth.

Everybody

One

The latter

The wounded

John

My friend

You

Yourself

Find a story for

Others

to read.

Everybody

Both of you

Either of you

The former

The latter

Ուրիշ հարց է, որ վերը նշված խոսքի մասերից ավելի գործածական են գոյականն ու անձնական (դերանունը ուղղական, խնդրառական և ստացական

հոլովով), բայց ուսանողին հաճախ մտահոգում է այն հարցը, թե արդյոք չկա որևէ մեկ այլ խոսքի մաս, որը կարող է հանդես գալ որպես կառույցի անվանական մաս, եթե անգամ կա մեկ օրինակ որևէ այլ խոսքի մասով, ուսանողը պարտադիր պետք է իմանա այդ մասին, որը կհեշտացնի երևույթի ընկալումը, քանի որ նրանք ապագա ուսուցիչներ և թարգմանիչներ են: Բայց այս հարցի պատասխանը նա չի գտնում ոչ՝ դասագրքերում, ոչ էլ այն աղբյուրներում՝ որոնք հետ ուսանողն առնչվում է, իսկ վարժությունների զրքում անհրաժեշտ է, որ լինեն այնպիսի վարժություններ, որոնք նպատակաուղղված կլինեն տարբեր խոսքի մասերի օգտագործմանը որպես երկանդան կառույցի անվանական բաղադրիչ:

Ինչ վերաբերում է բայական բաղադրիչին, ապա այն կարող է արտահայտվել որևէ դերբայի (Infinitive-ի, Participle-ի, Gerund-ի) ցանկացած կարգածնով այսինքն ցանկացած քերականական կարգի արտահայտությամբ:

Հարկ է նշել, որ դերբայներին հատկանշական են միայն երկու կամ երեք քերականական կարգածն՝

1. սեռ՝ Active, Passive, օրինակ to write to be written, writing, being written*, օրինակ

I believe them *to save* the child.

... I believe them *to be burnt*.

He went out quickly *shutting* the door behind him.

She didn't return with us *having been asked* to a supper party....

2. Perfect, Non-Perfect ձևեր, օրինակ to write, to have written, to have been written, writing, having written, having been written. Օրինակ

...but miss Marple happens *to have hit* upon the truth.

...*having tried* various topics of conversation... I asked him to introduce me to everybody.

3. Կերպ՝ Continuous, Non-continuous ձևեր*, to write-to be writing- to have been writing. Օրինակ՝

I hear you *love* children and *beloved* by them.

At that hour people were less likely *to be coming* in or *going out*.

Չպետք է մոռանալ ևս մեկ փաստ, որ

1. այն աղբյուրները, որոնցից ուսանողն օգտվում է, շատ վաղուց են լույս տեսել,

2. շատ բան է փոխվել լեզվաբանության աշխարհում, որոնք իրենց արտացոլումը չեն գտնում արդեն իրենց ժամանական ապրած դասագրքերում, ինչպես օրինակ, որ դերբայն ունի ժամանակի կարգ:

3. Նոր դասագրքերը, որոնք հրատարակվում են անգլիացիների և ամերիկացիների կողմից, հիմնականում ներկայացվում են մոդելների ձևով և չեն կարող կանխատեսել այն բոլոր դժվարությունները, որոնց հանդիպում է անգլերեն լեզու ուսումնասիրողը:

Մայրենի լեզվում այս կառույցները կարող են արտահայտվել թե՛ պարզ, թե՛ բարդ նախադասություններով, բայց նախընտրելի են բարդ նախադասությունները:

Իմի բերելով այս ամենը, ուսանողին կարելի է առաջարկել հետևյալ վարժությունների շարքը՝

1. Գտնել բոլոր ա. պարզ, բ. բարդ նախադասությունները,
2. Պարզեցնել ա. բոլոր բարդ նախադասությունները բ. բարդացնել երկանդամ կառույցով բոլոր պարզ նախադասությունները,
- Պետք է նշել, որ աղբյուրները սահմանափակ են և մատչելի չեն այսօրվա ուսանողի համար:
3. Օգտագործել տարբեր խոսքի մասեր որպես անվանական բաղադրիչ,
4. Օգտագործել դերբայի տարբեր կարգաձևեր որպես բայական բաղադրիչ,
5. Օգտագործել տարբեր դերբայներ, որպես բայական բաղադրիչ,
6. Ստեղծել և վերարտադրել մի պատմվածք, օգտագործելով տարբեր երկանդամ քերականական կառույցներ,
7. Քննարկել որևէ հարց, օգտագործելով բոլոր քերականական կառույցները:

Մեր կարծիքով, վերոհիշյալ վարժությունները անհրաժեշտ է կիրառել Ա. Ժ. Գրիգուլինայի " Non –Finite Forms of the verb" դասագրքին զուգահեռ:

Գրականության ցանկ

1. Азизян С.А., Методика преподавания видо-временных форм английского глагола в устном монологическом высказывании. Автореферат на соискание ученой степени кпн. М. 1978г.
2. Ganshina M.A., English Grammar. M. "Higher School Publishing House". 1964.
3. Gordon E.M., Krylova I.P., A Grammar of Present Day English. M. "Higher School Publishing House". 1974.
4. Kaushanskaya V.L., A Grammar of the English Language. Leningrad. Prosveshchenie. 1973.
5. Kobrina N.A., Korneyeva E.A., An English Grammar. Morphology. "Prosveshchenie". 1985.
6. Swan Michael, Practical English Usage. Oxford University Press, 1995.
7. Thomson A.J., Martinet A.V., A Practical English Grammar. Oxford University. 1986.